Հավելված N 11
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1979 - Ն որոշման

ՑԱՆԿ
Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների

Վերակենդանացման միջոցառումներ և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդություններ և վիճակներ՝

1) շոկային վիճակներ՝ 2-րդ և ավելի աստիճանի.

2) կոմատոզ վիճակներ.

3) դիաբետիկ հիպոգլիկեմիկ կոմա (1 օրվա գնով).

4) սուր շնչառական անբավարարություն՝

ա. սուր հիպօքսեմիկ շնչական անբավարարություն (զարկերակային արյան թթվածնի պարցիալ ճնշման (PaO2) իջեցում 60 միլիմետր սնդիկի սյունից պակաս), կամ

բ. սուր հիպերկապնիկ շնչական անբավարարություն (զարկերակային արյան ածխաթթու գազի պարցիալ ճնշման (PaCO2) բարձրացում 50 միլիմետր սնդիկի սյուն և ավելի), բացառությամբ թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) առկայության պարագայում, կամ

գ. կյանքին սպառնացող սուր շնչական անբավարարություն ԹՔՕՀ-ի առկայության պարագայում:

5) «կյանքին սպառնացող սուր շնչական անբավարարություն» համարել սույն ենթակետի «ա», «բ», «գ», «դ» և «ե» պարբերություններով նախատեսված ցուցանիշներից երկու և ավելի պարբերություններում նշված ցուցանիշների միաժամանակյա առկայությունը՝

ա. շնչառության հաճախականություն >24/1րոպեում և/կամ օժանդակ շնչառական մկանների ընդգրկում,

բ. գիտակցության մակարդակի խանգարումների առկայություն,

գ. զարկերակային արյան թթվածնով հագեցվածությունը (SpO2) 88-ից 92% FiO2 ≥40% պայմաններում,

դ. զարկերակային արյան ածխաթթու գազի պարցիալ ճնշումը (PaCO2) >60 միլիմետր սնդիկի սյուն (ինչպես նաև բարձր ելակետային մակարդակից),

ե. ացիդոզի առկայություն (pH ≤7.25).

6) սրտի փորոքների ֆիբրիլյացիա և թրթռոց /տախիսիստոլիկ ձև/, սրտի կանգ.

7) էկզոգեն թունավորումներ (ալկոհոլային՝ 1 օրվա գնով, կենդանիների խայթոցից, դեղորայքային և քիմիական նյութերով թունավորումներ).

8) էպիլեպտիկ ստատուս, գիտակցության կորստով.

9) ծանր աստիճանի պրեէկլամպսիա և էկլամպսիա.

10) տարբեր տեսակի էմբոլիաներ.

11) HELLP-համախտանիշ (հեմոլիզ, լյարդի ֆերմենտների բարձրացում, թրոմբոցիտների քանակի իջեցում).

12) սրտամկանի սուր ինֆարկտ.

13) ինսուլտ (հեմոռագիկ, իշեմիկ).

14) պոլիտրավմա (խոշոր ոսկրերի և/կամ ներքին օրգանների համակցված վնասվածքներ),

15) ցրտահարություն՝ 3-րդ աստիճանի.

16) մարմնի արտաքին ծածկույթի այրվածքներ՝ 1-ին աստիճանի՝ մարմնի 50 տոկոսից ավել մակերեսով, 2-րդ աստիճանի՝ մարմնի 10 տոկոսից ավելի մակերեսով, 3-րդ, 4-րդ աստիճանների այրվածքներ՝ մարմնի 1 տոկոս և ավելի մակերեսով:

Այլ հիվանդություններ և վիճակներ՝

1) հոգեշարժական գրգռված վիճակներ.

2) ցնորազառանցանքային սուր վիճակներ.

3) սուր աֆեկտիվ վիճակներ, փսիխոզներ.

4) քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք,

5) օնկոհեմատոլոգիական հիվանդություններ (արյունաստեղծ հյուսվածքների չարորակ նորագոյացություններ).

6) հեմոֆիլիա.

7) ապլաստիկ անեմիա.

8) միելոդիսպլաստիկ համախտանիշ.

9) օրգան համակարգերի ախտորոշված չարորակ նորագոյացությունների վիրահատական բուժում.

10) օրգան համակարգերի ախտորոշված չարորակ նորագոյացությունների ճառագայթային բուժում (բացառությամբ 15 և ավելի MeV (մեգաէլեկտրոնվոլտ) հզորություն ունեցող բժշկական գծային արագացուցիչով իրականացվող ճառագայթային բուժում).

11) սրտամկանի սուր ինֆարկտ՝ սրտի անհետաձգելի վիրահատության ծրագրի շրջանակներում (ստենտի տեղադրում).

12) իշեմիկ ինսուլտ՝ գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտի բուժման ծրագրի շրջանակներում.

13) սիֆիլիսի բոլոր ձևերը.

14) աորտայի անևրիզմայի շերտազատում՝ աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման ծրագրի շրջանակներում:

Վարակիչ հիվանդություններ՝

1) ժանտախտ.

2) տուլարեմիա.

3) սիբիրյան խոց.

4) դիֆթերիա.

5) կապույտ հազ և հարկապույտ հազ.

6) փայտացում.

7) սուր պոլիոմիելիտ, սուր թորշոմած կաթվածահարություն.

8) կատաղություն.

9) բծավոր տիֆ (էպիդեմիկ).

10) մալարիա.

11) մարդու իմունային անբավարարության վիրուս/ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՄԻԱՎ/ ՁԻԱՀ).

12) թռչնագրիպ.

13) վիրուսի նոր լոգոտիպով հարուցված գրիպ.

14) հպավարանցիկ հեմոռագիկ տենդեր.
15) բոտուլիզմ.
16) քութեշ (բարդացած ձևերը).
17) մենինգոկոկային վարակ.
18) առաջնային սուր մենինգիտներ.
19) այլ բակտերիային հիվանդություններ.
20) ջրծաղիկ (բարդացած ձևերը).
21) կարմրուկ (բարդացած ձևերը).
22) կարմրախտ (բարդացած ձևերը).
23) սուր վիրուսային հեպատիտներ.
24) համաճարակային պարոտիտ (բարդացած ձևերը).
25) վարակային մոնոնուկլեոզ.
26) առաջնակի սուր բրուցելյոզ.
27) գրիպ (Առողջապահության նախարարության կողմից համաճարակի հայտարարման կամ բռնկումների դեպքում).
28) խոլերա.
29) որովայնային տիֆ և պարատիֆ.
30) այլ սալմոնելոզային վարակներ.
31) շիգելյոզ.
32) չճշտված ծագումնաբանությամբ և այլ բակտերիալ ու վիրուսային սուր աղիքային հիվանդություններ.
33) տուբերկուլոզի բոլոր ձևերը.
34) լեպտոսպիրոզ.
35) լեպրա (բոր).
36) լեգիոներների հիվանդություն.
37) Կու տենդ, Բրիլլի հիվանդություն.
38) բնական ծաղիկ.
39) լեյշմանիոզ.
40) ատիպիկ թոքաբորբ.
41) սոդոկու, ստրեպտոբացիլյոզ, ֆելինոզ.
42) խլնախտ, մելիոիդոզ.
43) նոր կորոնավիրուսային վարակ (2019n-CoV).
44) համաճարակաբանական ներուժ ունեցող նոր առաջ եկող կամ վերադարձող այլ ախտածիններով պայմանավորված վարակներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ